է 1731ին կենաց փայտի շրջապատը և պահարանը հսկողութեամբ Շղթայակրի, (Ցուց. Պ.)։

Սաղաւարտ մը համակ արծաթ և ականակուռ Ղափլան արծաթագործին ձեռքով 1725ին նուէր տրուած է Ս. Յակոբի վանքին հետեւեալ յիշատակարանով. «Զեռամբ մհտ. Ղափլանին յիշատակէ Ատանացի մհտ. Թորոսին, հօրն Ճանիկին, մօրն մհտ. Խաթունին և եղբարցն Յակոբին և մհտ. Անտոնին և կողակցին մհտ. Մարիամին և դստերն Խաթունին ի ս. քաղաքն յերուսաղէմ սրբոյն Յակոբայ տաճարին թուին ՌՃՀԴ. (=1725) ի պատրիարքութեան Գրիգորի Արհի բաբունապետին» (Ցուց. պ.)։ Ղափլան գրիչ Ալաշխանի մէջ ընդօրինակած է նաև ՌՃԾԹ (= 1710) թուին Աւետարան մը «ընդ հովանեաւ սբ. Աստուածին և Ս. Ստփնոս» եկեղեցիներուն. նոյն ձեռագիրին ստացողը կ'ըլլայ յետոյ Գրիգոր պտրք. Շղթայակիր ՌՃՀԱ. (= 1722) թուին, եւ կը յիշատակէ վանքին Մատենադարանին։ Վերջին աւետարանիս ծաղկողն եղած է Ստեփանոս վրդ. Կաֆայեցի «Ջերմ սիրով և բալում երկամբք գունակ գունակ գեղօք և ոսկեաւ զարդարեաց»։ Ղափլան գրչի հօրը՝ Սարգսին մէկ ձեռագիր շարականը կը գտնուի Ս. Յակոբի վանքը (ՄՁ. Թ. 1230) հաւանաբար Ղափլանի յիշատակածը։

ՂԵՒՈՆԴ ԵՊՍ. ՇԻՇՄԱՆԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ. — Ծ. 1843ին, աշկ. Խասգիւղի Ներսիսեան Վարժ.ի. Զռ. Արմաշ 1874ին. այրիանալէ վերջ. 1880ին Եպս. կը ձեռնադրուի. վարած է Պիլէճիկի, Խարբերդի, Կարնոյ, Կիւրիւնի եւ Եօզկատի Առ. պաշտօնները (1876 - 1895). կը տարագրուի Կարինէն Ս. Յակոբի վանքը 1895ին, ուր կը վախճանի 1904ին։ Ժառ. վարժ.ի հայերէն եւ ֆրանս. լեզուներու դասերը աւանդած է, և գրած է 1901 տարիին Ս. Յակոբի վանքին օրացոյցին յաւելուածը. Ս. Երուսաղէմ եւ յաջորդութիւն պատրիարքաց Հայոց առաք. Սրբոց Յակոբեանց խորագրով։ Կ. Պոլսոյ և Տփխիսի լրագրաց մէջ Վրոյր և Գիրուկ անուններով, Արարատ հանդէսին մէջ ալ նմանապէս ծածկանունով յօդուածներ ունի, ամէնքն ալ Սաղիմական խնդիրներու վերաբերմամբ։ Ունի նաև Յաւերգք Հայրենեաց բանաստեղծական հատորիկ մը Հայորդի ծածկանունով. (տպ. Դահիրէ, 1902)։

ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՂԱՐԱՊԱՂՅԻ.—Մբ. 1851ին. Զռ. 1862ին,